




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«8» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ  Ս. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-04/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7330-16 գրությամբ ներկայացված «Ագաթ-777» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01807983) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 16.12.2015թ. թիվ 1/73-1/40473-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ագաթ-777» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ Նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ կրթության և գիտության նախարարության 08.12.2015թ. թիվ 04/19.3/14698-15 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40473-15 գրության հիման վրա «Ագաթ-777» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու արդյունքում Կենտրոնը գտել է, որ «Ագաթ-777» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, ինչի վերաբերյալ 16.02.2016թ. թիվ 01/04.1/462-16 գրությամբ հայտնել է Նախարարությանը:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.02.2016թ. թիվ 1/73-1/7330-16 գրությամբ վկայակոչել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հայտնելով, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Ագաթ-777» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ագաթ-777» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 18.12.2015թ. թիվ 01/04.1/3784-15 գրությամբ դիմել է Ընկերությանը:

«Ագաթ-777» ՍՊԸ-ն 23.12.2016թ. թիվ 169 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Ագաթ-777» ՍՊԸ-ի միջև 12.08.2015թ. կնքված «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) շրջանակներում թվով 6 չափաբաժիններով նախատեսված ապրանքներից Ընկերությունը պատշաճ և ժամանակին մատակարարել է թվով 4 չափաբաժնով նախատեսված ապրանքները:

Պայմանագրի շրջանակներում 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները չեն ընդունվել Պատվիրատուի կողմից՝ տեխնիկական բնութագրին ամբողջությամբ չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Ընկերությունը հայտնել է, որ չմատակարարված չափաբաժինների մասով Պայմանագրին կից տեխնիկական բնութագրերը կազմվել են ոչ լիարժեք, որոշ ապրանքներ չեն համապատասխանում շուկայում առկա ապրանքներին, բացի այդ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նշված տեխնիկական բնութագրերով ապրանքներ գոյություն չունեն:

Ընկերությունը բազմիցս դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ ճշտելու տեխնիկական բնութագրերի կազմման աղբյուրը կամ արտադրողի անունը, սակայն պատասխան չի ստացվել:

Բնութագրերի անհամապատասխանությունը շտկելու կամ փոփոխելու համար «Ագաթ-777» ՍՊԸ-ն դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով Պայմանագրի ժամկետը երկարացնել մինչև 2016թ. հունվարի 30-ը, սակայն Պատվիրատուն մերժել է Պայմանագրի ժամկետի երկարացման խնդրանքը՝ պատճառաբանելով, որ ֆինանսավորումը նախատեսվում է մինչև 2015թ. դեկտեմբերի 25-ը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «Ագաթ-777» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը 18.01.2016թ. թիվ 3 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված թվով 6 չափաբաժիններից՝ 4 չափաբաժնով նախատեսված ապրանքները մատակարարել է պատշաճ՝ որակով և ժամանակին, իսկ 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում ձեռք բերվող ապրանքների հատկանիշները և տալիս են այլընտրանքային մեկնաբանության տեղիք, մասնավորապես՝

Պայմանագրի 7-րդ չափաբաժնի՝

- 14-րդ կետում նշված էլեկտրական սղոցի քաշը՝ **մոտ 8կգ.**
- 15-րդ կետում՝ քաշը **մոտ 8կգ.**
- 16-րդ կետում՝ քաշը **մոտ 2,5 կգ.**

• 17-րդ կետում՝ հղկանիվների միջև հեռավորությունը ~ 30սմ, հղկանիշի տրամագիծը՝ մոտ 15սմ.

• 18-րդ կետում՝ քաշը մոտ 2,5 կգ.

• 19-րդ կետում՝ քաշը մոտ 25 կգ.

• 23-րդ կետում՝ քաշը մինչև 140 կգ, հղկա ժապավենի լայնությունը՝ մոտ 150մ.

• 24-րդ կետում՝ երկայնական շարժաչափը /x/~900մմ, լայնական շարժաչափը /y/~300մմ, ուղղահայաց շարժաչափ /z/~700մմ, հաստոցի քաշը՝ մինչև 1000 կգ, մոտավոր չափերը՝ 1600x1450x2100մմ

• 25-րդ կետում՝ մոտավոր չափերը 1700x750x1270մմ, շարժիչի հզորությունը՝ մինչև 1,5 ԿՎՏ, լայնական սուպորտի տեղաշարժման չափը~175մմ, կտրիչի սահնակի մաքսիմալ հորիզոնական տեղաշարժման չափը՝ մոտավորապես 800մմ, շափնդելի անցքի տրամագիծը՝ մինչև 40մմ

• 27-րդ կետում՝ հզորությունը~1,7ԿՎՏ, քաշը՝ մոտ 400կգ

• 28-րդ կետում՝ մոտավոր չափը 400x200x1600մմ

• 40-րդ կետում՝ քաշը մոտ 500գր

• 45-րդ կետում՝ քաշը մոտ 120կգ

• 46-րդ կետում՝ քաշը մոտ 450կգ

• 51-րդ կետում՝ քաշը մոտ 120կգ

• 52-րդ կետում՝ քաշը մոտ 120կգ

• 53-րդ կետում՝ տարողությունը մոտ 150լ, մոտ 3սմ ընդունող ձագար, քաշը՝ մոտ 30կգ

• 55-րդ կետում՝ հզորությունը մինչև 15տն, չափը՝ մոտ 75x75x160

• 86-րդ կետում՝ քաշը՝ մոտ 75կգ, չափը՝ մոտ 31x25x45 սմ

• 87-րդ կետում՝ կոմպրեսորի բալոնի ծավալը՝ մոտ 65մ, չափը՝ մոտ 110x55x80սմ, քաշը՝ մոտ 138կգ:

Պայմանագրի 13-րդ չափաբաժնի՝

• 1-ին կետում սեղանը պատրաստված է ամուր փայտից՝ մոտ 30մմ հաստության, աշխատանքային երես և սեղանի 3 կողմերով ձգվող՝ մինչև 80մմ բարձրության փայտյա պաշտպանիչներ, չափերը՝ մոտ 100x100x50սմ

- 2-րդ կետում՝ նստատեղի տրամագիծը՝ մոտ 35սմ
- 3-րդ կետում՝ արագության տիրույթը մինչ 3500րոպ, ձեռքի գործիքի քաշը՝ մոտ 100գր, հզորությունը՝ մոտ 150 ՎՏ
- 7-րդ կետում՝ գրտնակագլանի տրամագիծը՝ մոտավորապես 150մմ, չափերը մոտ 340x240x450մմ, քաշը՝ մոտ 40կգ
- 8-րդ կետում՝ բարձրությունը մոտ՝ 110սմ
- 9-րդ կետում՝ սարքի էլեկտրաշարժիչն ունի մոտ 3600րոպ արագություն, չափերը՝ մոտ 40x75x40սմ
- 10-րդ կետում՝ հզորությունը մոտ 150 ՎՏ, շափնդեղների միջև հեռավորությունը՝ մոտ 330մմ, քաշը մոտ՝ 3,5կգ, չափերը մոտ 15x15x40սմ
- 11-րդ կետում՝ հզորությունը մոտ 2 կՎՏ
- 12-րդ կետում՝ ելքի հզորությունը մոտ 50լ/ր, ճնշումը՝ մոտ 8բալ, չափերը՝ մոտ 470x370x370, աղմուկի աստիճանը մոտ 40Դբ
- 13-րդ կետում, չափահատակի տրամագիծը՝ մոտ 15սմ, չափերը՝ մոտ 20x15x5սմ
- 14-րդ կետում՝ ճնշաաշտարակի բարձրությունը՝ մոտ 22սմ
- 16-րդ կետում՝ շափնդալետի տրամագիծը՝ մոտ 6,8մմ
- 28-րդ կետում՝ չափերը մոտ 5x5x11սմ
- 29-րդ կետում՝ չափերը մոտ 7x13x7սմ
- 40-րդ կետում՝ խորհանարդիկի կողմի բարձրությունը մոտավորապես 60մմ, քաշը՝ մոտ 15կգ
- 41-րդ կետում՝ խորհանարդիկի կողմի երկարությունը մոտավորապես 60մմ,
- 46-րդ կետում՝ մաքսիմալ ջերմաստիճանը մոտ 90° C, չափերը մոտ 210x190x500մմ, քաշը՝ մոտ 10կգ
- 47-րդ կետում՝ չափերը մոտ 110x110x380մմ, քաշը՝ մոտ 6կգ
- 49-րդ կետում՝ ձուլմանի պատի հաստությունը մոտ 4,8մմ, ներքին տրամագիծը՝ մոտ 70մմ, բարձրությունը մոտ 35մմ, խորությունը մոտ 2,5մմ
- 50-րդ կետում, գլխամասի տրամագիծը՝ մոտ 100մմ:

Ընկերությունը նշել է, որ «մոտ, մոտավորապես և մինչև» բառերի պայմաններում Ընկերության համար անհասկանալի էր, թե ինչպիսի տեխնիկական հատկանիշներ Պատվիրատուի կողմից բավարար կճանաչվեր:

«Ագաթ-777» ՍՊԸ-ն հայտնել նաև, որ «մոտ, մոտավոր և մինչև» բառերը տալիս են այլընտրանքային մեկնաբանության տեղիք, ինչպես նաև, նշված տեխնիկական բնութագրերում առկա են միմյանց հակասող և շուկայում գոյություն չունեցող տեխնիկական բնութագրեր, մասնավորապես, 7-րդ չափաբաժնի՝

- 28-րդ կետում նշված հզորությունը՝ մոտ 10 ԿՎՏ, մոտավոր չափերը՝ 400x200x1600մմ, քաշը՝ 6000կգ պարամետրերով ապրանք գոյություն չունի,

- 46-րդ կետում՝ անվադողի մաքսիմալ տրամագիծը 50", 52", 54", քաշը՝ մոտավորապես 450կգ, չափը՝ 175x175x175 սմ պարամետրերով ապրանք գոյություն չունի,

- 52-րդ կետում նշված անիվի մաքսիմալ տրամագիծը՝ 44", քաշը՝ մոտ 150կգ, հատկանիշներով ապրանք գոյություն չունի,

- 57-րդ կետում նշված կոմպրեսորի բալոնի ծավալը՝ մոտավորապես 65լ, քաշը՝ մոտ 130կգ, չափը՝ մոտ 11055x80սմ հատկանիշներով ապրանք գոյություն չունի:

Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի՝

- 7-րդ կետում նշված գրտնակազլանի տրամագիծը՝ մոտավորապես 120մմ. չի համապատասխանում նշված 40կգ-ին, իսկ չափերը մոտ 340x240x450մմ տվյալներին,

- 12-րդ կետում ելքի հզորությունը՝ մոտ 50լ/րոպեում, ճնշումը՝ մոտ 8 բալ, աղմուկի աստիճանը՝ մոտ 40բլ., չափսերը՝ մոտ 470x370x370 մմ. տվյալներով ապրանք գոյություն չունի,

- 14-րդ կետում՝ նշված ապրանքը՝ ճնշահարթակի չափսերը՝ 25x40մմ, ճնշաաշտարակի բարձրությունը՝ մոտ 22սմ գոյություն չունի,

- 46-րդ կետում նշված՝ հզորությունը՝ 250ՎՏ, չափերը՝ մոտ 210x19x500մմ, հալեցվող մոմի քաշը՝ ամենաշատը 1,5կգ տվյալներով ապրանք գոյություն չունի:

Ընկերությունը նշել է նաև, որ բնութագրերի անճշտությունների մասին բազմիցս հայտնել է Պատվիրատուին և հավաստիացրել, որ «Ագաթ-777» ՍՊԸ-ն չի

հրաժարվում կատարել իր պայմանագրային պարտավորությունները, սակայն դա հնարավոր կլինի միայն Պայմանագրի տեխնիկական բնութագրի հատկանիշները հստակեցնելու և միմյանց հակասող պայմանները վերացնելու դեպքում:

Կենտրոնում 02.04.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ- 04/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ «Ագաթ-777» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ պնդում է 23.12.2016թ. թիվ 169 և 18.01.2016թ. թիվ 3 գրություններով Կենտրոնին հայտնած դիրքորոշումներն ամբողջությամբ: Միաժամանակ, Ընկերության տնօրենը նիստով ներկայացրել է Պայմանագրի 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների վերաբերյալ տարբեր աղբյուրներից էլեկտրոնային քաղվածքները:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը կարծիք ստանալու նպատակով 18.12.2015թ. թիվ 01/04.1/3792-15 գրությամբ դիմել է Պատվիրատուին:

Պատվիրատուն 23.12.2015թ. թիվ 04/19.3/15329-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 03.12.2015թ. լուծվել է «Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ 12.08.2015թ. կնքված «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով պայմանագիրը՝ 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.6 կետը և 2.1.6.1 կետի «բ» ենթակետը:

Կենտրոնում 02.04.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ- 04/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը պատշաճ և որակով մատակարարել է ուսումնական արհեստանոցների թվով 4 հավաքածու՝ 8-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով, իսկ 7-րդ և 13-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքը չի մատակարարել, ինչի արդյունքում Պայմանագիրը միակողմանի Պատվիրատուի կողմից լուծվել է: Պատվիրատուի ներկայացուցիչը նիստով ընդունել է, որ Պայմանագրի 7-րդ և 13-րդ չափաբաժինների համար սահմանված տեխնիկական բնութագիրը հստակ չի եղել և տեղեկացրել է, որ տեխնիկական բնութագրերը

կազմվել և մշակվել են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության N°ENPI/2009/021066 ֆինանսավորման համաձայնագրի «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրով Եվրոպական միության կողմից ընտրված փորձագետի կողմից:

4. ՍՑ-ԳԲԽ-04/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7330-16 գրությամբ ներկայացված «Ագաթ-777» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական արհեստանոցների և լսարանների մատակարարման ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով բաց ընթացակարգ, որի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ագաթ-777» ՍՊԸ-ն:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Ագաթ-777» ՍՊԸ միջև 12.08.2015թ. կնքվել է «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով պայմանագիր:

3. Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 7-րդ (ուսումնական արհեստանոց-7), 8-րդ (ուսումնական արհեստանոց-8), 10-րդ (ուսումնական արհեստանոց-10), 11-րդ (ուսումնական արհեստանոց-11), 12-րդ (ուսումնական արհեստանոց-12) և 13-րդ (ուսումնական արհեստանոց-13) չափաբաժիններով նախատեսված ապրանքները ենթակա են գնման 2015թ. 4-րդ եռամսյակի ընթացքում (մինչև 30.11.2015թ.):

4. «Ագաթ-777» ՍՊԸ-ն Պայմանագրի շրջանակներում մատակարարել է 8-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով նախատեսված «ուսումնական արհեստանոցներ» ապրանքատեսակը:

5. Ընկերությունը, հաշվի առնելով 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում կիրառված «մոտ, մոտավոր և մինչև» արտահայտությունները, Պատվիրատուին առաջարկել է մատակարարել Ընթացակարգի տեխնիկական բնութագրով սահմանված հատկանիշներից որոշակի շեղումներով ապրանքներ, ինչը չի ընդունվել Պատվիրատուի կողմից:

6. Ընկերության կողմից 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները չմատակարարվելու արդյունքում Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.6 կետը և 2.1.6.1 կետի «բ» ենթակետը, 03.12.2015թ. միակողմանի լուծել է «Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ 12.08.2015թ. կնքված «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով պայմանագիրը՝ 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունն օբյեկտիվորեն զրկված է եղել պատշաճ կատարելու իր պայմանագրային պարտավորությունները՝ 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով, Կենտրոնը 16.02.2016թ. թիվ 01/04.1/462-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40473-15 գրությամբ ներկայացված «Ագաթ-777» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը, 26.02.2016թ. թիվ 1/73-1/7330-16 գրությամբ, վկայակոչել է Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնարարելով նախաձեռնել «Ագաթ-777» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-04/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7330-16 գրությունը և կից ներկայացված

փաստաթղթերի պատճենները, «Ագաթ-777» ՍՊԸ-ի 23.12.2016թ. թիվ 169 և 18.01.2016թ. թիվ 3 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ կրթության և գիտության նախարարության 23.12.2015թ. թիվ 04/19.3/15329-15 գրությունը, ինչպես նաև լսելով Կենտրոնում կազմակերպված նիստի ժամանակ կողմերի կարծիքները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի**, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ **բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը**: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Այսպիսով, ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Ագաթ-777» ՍՊԸ միջև 12.08.2015թ. կնքված «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ենթակա են մատակարարման 2015թ. 4-րդ եռամսյակի ընթացքում (մինչև 30.11.2015թ.):

Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում մատակարարվել են 8-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով նախատեսված «ուսումնական արհեստանոցներ» ապրանքատեսակները, սակայն 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով Ընկերության կողմից առաջարկված ապրանքները չեն ընդունվել Պատվիրատուի կողմից՝ տեխնիկական բնութագրին ամբողջությամբ չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Ընկերությունը հաշվի առնելով Ընթացակարգի տեխնիկական բնութագրի «**մոդ, մոդավոր և մինչև**» արտահայտությունները համարել է, որ նշված հատկանիշների գծով թույլատրելի են որոշ շեղումներ՝ հակառակ դեպքում անհասկանալի է նման արտահայտությունների առկայությունը, սակայն հետագայում կնքված պայմանագրի շրջանակներում նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով Պատվիրատուին առաջարկված ապրանքները

վերջինիս կողմից չընդունվելուց հետո միայն պահանջել է Պատվիրատուից հստակեցնել Պայմանագրի 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը կամ մատնանշել տեխնիկական բնութագրերի կազմման աղբյուրը կամ արտադրողի անվանումը, որը սակայն Պատվիրատուի կողմից չի կատարվել:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն մեկնաբանությանը, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրում **«մոտ, մոտավոր և մինչև»** արտահայտությունները նշվել են՝ նկատի ունենալով $\pm 1\%$ շեղումներ՝ իրատեսական չեն կարող լինել, քանի որ միևնույն գնման առարկայի տարբեր հատկանիշներին վերաբերող ցուցանիշներից որևէ մեկի $\pm 1\%$ -ի փոփոխությունը չի ենթադրում, որ մյուս ցուցանիշների փոփոխությունը ևս պետք է լինի $\pm 1\%$ -ի շրջանակներում (օրինակ՝ չափերը **մոտ 210x190x500մմ**, քաշը՝ **մոտ 10կգ** և այլն):

Այսպիսով, Պայմանագրի 7-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով Ընկերության կողմից առաջարկված ապրանքները չեն համապատասխանել ոչ թե գնման առարկայի համար Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, այլ, ըստ էության, չեն համապատասխանել Պատվիրատուի իրական կարիքի համար անհրաժեշտ գնման առարկայի հատկանիշներին: Այսինքն, Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրել Պատվիրատուի կարիքին համարժեք գնման առարկաների հատկանիշները, հետևաբար, նման պայմաններում, Ընկերությունն օբյեկտիվորեն զրկված է եղել պատշաճ կատարելու իր պայմանագրային պարտավորությունները՝ 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով, ինչն էլ հիմք է հանդիսացել Պատվիրատուի կողմից 03.12.2015թ. «Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ 12.08.2015թ. կնքված «ՀՀԿԴՆԲԸԱՊԶԲ-15/1-1» ծածկագրով պայմանագրի՝ 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծմանը:

Այսինքն, Պայմանագրի տեխնիկական բնութագիրը չի արտահայտել Պատվիրատուի գնման պահանջը, ինչի վերաբերյալ, ըստ էության, չի առարկել նաև Պատվիրատուի ներկայացուցիչը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի տեխնիկական բնութագիրը կազմվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ, այն է՝ հստակ չեն նկարագրվել ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ տեղիք տալով այլընտրանքային մեկնաբանությունների, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7330-16 գրությամբ ներկայացված «Ագաթ-777» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01807983) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բոլորքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-04/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան